ՅԱ. Ի. ԽԱՉԻԿՅԱՆ

ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(հարցադրման կարգով)

Հետազոտման առարկայի հարցն առաջնակարգ նշանակություն ունի գիտական գործունեության ամեն մի բնագավառի համար*։ Նրա ճշտումն անհրաժեշտ պարզություն է մտցնում գիտության համապատասխան ճյուղի կարգավիճակի մեջ, բացահայտում նրա սահմանները, նրա տեղն իմացության անծայրածիր օվկիանոսում։ Միաժամանակ այդ արտաքնապես հասարակ թվացող հարցը իրականում բավականին բարդ է։ Կարևոր գործոններից են գիտական տվյալների մշտական կուտակումը, պատմական դարաշրջանը, հետազոտողի դիրքորոշումը և այլն։ Առարկայի հարցը, ինքնին, հաճախակի գրավում է նաև առանձին հեղինակների ուշադրությունը, որոնք իրենց առջև խնդիր են դնում նոր հիմնավորում տալ այս կամ այն գիտության առարկային, երբեմն անգամ այն դեպքերում, երբ այդ հարցը վիճաբանություն չի հարուցում։ Վերջապես, առարկայի հարցը կարևոր նշանակություն ունի նաև դասավանդման համար։

Դիմելով այս հոդվածի խնդիրներին՝ ասվածին պետք է ավելացնել հետևյալը։

Էսթետիկան և նրա պատմությունը պատկանում են հասարակագիտական, խիստ գաղափարախոսական, փիլիսոփայական գիտությունների թվին, մի բան, որ լրացուցիչ կերպով բարդացնում է այդ առարկայի վերլուծությունը ինչպես նրա ներկայիս կեցությունում, այնպես էլ պատ-

* Իր բովանդակությամբ այս տարեգիրքը նախկինում հրատարակված «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» երկու գրքի օրգանական շարունակությունն է, փաստորեն՝ այդ շարքի երրորդ գիրքը[1]։

մական տեսանկյունով։ Հոդվածի վերնագրով առաջադրված պրոբլեմի լուծման ճանապարհին դժվարություն ստեղծող յուրահատուկ գործոն է նաև էսթետիկայի սեփական ճակատագիրը։

Ինչպես հայտնի է, էսթետիկական գիտելիքի արմատները գնում են դարերի խորքը և իրենց իմացնել են տալիս արդեն հնագույն քաղաքակրթությունների մշակույթում։ Բայց միևնույն ժամանակ նորածնի, այսպես ասած «կնունքը» կատարվեց բավականին ուշ. միայն 1750 թվականին գերմանական ռացիոնալիստ-փիլիսոփա Ալեքսանդր Բաումհարտենը շրջանառության մեջ մտցրեց ներկայիս էսթետիկա տերմինը, որը միանգամից արմատներ տվեց և ընդունվեց ամենուրեք։ Մինչ այդ էսթետիկական գիտելիքի ոլորտը հանդես էր գալիս կամ անանուն, կամ իրեն հարազատ մեկ ուրիշ և կամ իր էությունից շատ հեռու անվանումներով։ Մենք կանգ չենք առնում այն բանի վրա, որ Բաումհարտենի կողմից ներմուծված էսթետիկա տերմինն ուներ փոքր-ինչ այլ նշանակություն և անցավ էվոլյուցիայի որոշ ուղի, մինչև որ ձեռք բերեց իր ժամանակակից բովանդակությունը։

Իհարկե, անվանումների ողջ զանազանության պայմաններում տեղի էր ունենում որոշակի գաղափարատեսական այն նյութի կուտակում և զարգացում, որն էլ կազմում է էսթետիկայի հիմքը, նյութ, որը հնարավոր չէ դասել տեսական գործունեության որևէ այլ բնագավառում։ Հենց այդ պատճառով էլ, անկախ ճակատագրի բոլոր անակնկալներից՝ ուրիշի անվան տակ կամ անանուն հանդես գալը, էսթետիկան գիտատեսական գործունեության հատուկ ոլորտ է եղել, որը և հնարավորություն է տվել 1829 թ. Ռուսաստանում Ի. Սրեզնի-Կանաշևին և 1858 թ. Ավստրիայում (Վիեննա) Ռ. Ցիմմերմանին հիմք դնել էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրմանը։

Ինչպես պատահել է բազմիցս, պրակտիկան և ինտուիցիան այս անգամ ևս առաջ անցան տեսությունից. էսթետիկայի պատմությունը սկսեցին ուսումնասիրել և համակարգել դեռևս նախքան նրա առարկային գիտական բնորոշում տալը։ Եվ գնալով ավելի ու ավելի էր մեծանում այդ սահմանման անհրաժեշտությունը։

Այդ պատճառով էլ, էսթետիկական մտքի պատմության առարկան սահմանելու համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել էսթետիկայի առարկայի կամ, ավելի ճիշտ, էսթետիկայի միասնական առարկայի հարցը։ Ամենից տարածված և ընդհանուր սահմանումն ընդգրկում է իրականության էսթետիկական ճանաչողության և մարդու էսթետիկական գործունեության էության ու օրինաչափությունների ոլորտը։ Գոյություն ունի այն տեսակետը, որ էսթետիկայի առարկան պատմական

զարգացման ընթացքում փոփոխվում է, որով և պայմանավորվում է սահմանման բարդությունը։ Որպես ապացույց բերում են էսթետիկայի դասականների տարբեր սահմանումները, որոնց վրա հենվելով էլ եզրակացնում, որ ներկայումս էլ այդ առարկան լինելիության ընթացքում է, և ցանկացած սահմանում այն ընդգրկում է միայն մոտավորապես։

Սակայն էսթետիկայի առարկայի նկատմամբ նման մոտեցումը էսթետիկայի պատմաբանին դնում է բարդ և հակասական դրության մեջ. նախ, ստացվում է, որ դարերի ընթացքում չունենալով իր կայուն առարկան, այլ փոփոխվող ինչ-որ մի բան, հետևաբար և տարբեր ժամանակաշրջաններում ունենալով տարբեր առարկաներ, էսթետիկան անկարող է հանդես գալ որպես ամբողջական գիտություն։ Երկրորդ, բնական է, որ նման իրավիճակում հնարավոր չի լինի էսթետիկայի պատմությունն ուսումնասիրել որպես հետևողականորեն զարգացող գործընթաց։ Եվ վերջապես, համակարծիք լինելով այն տեսակետին, որ էսթետիկայի առարկան լինելիության ընթացքում է, էսթետիկայի պատմաբանն ի վիճակի չի լինի որոշակի տեսանկյունով ներկայացնել այն պատմական պատկերը, ուր առանց այն էլ չեն համընկնում էսթետիկայի առանձին ներկայացուցիչների կողմից էսթետիկայի առարկային տրված սահմանումները։

Մանրամասներով տարվելու, օրինակներ բերելու և մեկնաբանություններ անելու հարկ չկա. ներկա դեպքում դա մեզ կհեռացնի մեր գլխավոր խնդրից։ Կարծում ենք, բաղմակողմանի և սկզբունքային վերլուծությունը հնարավորություն կտա ցույց տալու, որ տարբեր տեսաբանների տարբեր սահմանումները կամ տվյալ պրոբլեմի նկատմամբ տարբեր ուղղությունների ու դպրոցների տարբեր մոտեցումները վերջին հաշվով հանգեցնում էին և հանգեցնում են էսթետիկայում հիմնականում նույն նյութի ուսումնասիրմանը։ Հասկանալի է, որ դրան նրանք մոտենում են տարբեր կողմերից՝ հաճախ ելնելով արմատապես տարբեր դիրքորոշումներից։ Այդ դիրքորոշումների անհամապատասխանությունը, այնուամենայնիվ, հանգեցնում է էսթետիկայի առարկայի մոտավորապես նույն բովանդակության արտացոլմանը, թեև տարբեր ձևերով։ Միաժամանակ նշենք, որ էսթետիկայի զարգացմանը և էսթետիկա-պատմական ուսումնասիրությունների առավել մեծ ծավալմանը համապատասխան՝ տեղի է ունենում հետևյալ երկկողմ գործընթացը։

Մի կողմից էսթետիկական վերլուծության ոլորտ է ներքաշվում այնպիսի նյութ, որը նախկինում, հնարավոր է, չէր գիտակցվում և չէր դիտվում որպես էսթետիկական։ Մյուս կողմից, նրա ոլորտից դուրս էր գալիս որպես ոչ էսթետիկական որոշակի նյութ, որը նախկինում, ընդ-

հակառակը, դասվում էր էսթետիկական գիտելիքի շրջանակներում, իբրև այդ ոլորտին ներհատուկ։ Համենայն դեպս, յուրաքանչյուր հեղինակ ելնում է և՛ էսթետիկայի, և՛ էսթետիկայի պատմության ոչ միայն սեփական ըմբռնումից, այլև այդ հասկացությունների՝ գոյություն ունեցող և իրեն ժամանակակից սահմանումներից։ Եվ դա միանգամայն ճիշտ է, քանի որ անցյալի հարցերի ուսումնասիրման ժամանակ պետք է ելնել տրվյալ տերմինի հետ կապվող այսօրվա իմաստից։ Էսթետիկական գիտության զարգացման այսօրվա մակարդակն օգնում է հասկանալ և բացահայտել անցյալի նյութը, և՛ վերակառուցել էսթետիկական գիտելիքի զարգացման ընթացքը։

Եթե փորձենք հանրագումարի բերել գոյություն ունեցող նյութը, չծանրաբեռնելով շարադրանքը էսթետիկայի (և էսթետիկականի) տարբեր բնորոշումների թվարկումով, ապա մեր առջև պարզորոշ կառանձնանան սահմանումների երկու միմյանց հակադիր խմբեր, որոնք համապատասխանաբար սկիզբ են առնում փիլիսոփայության հիմնական հարցի մատերիալիստական և իդեալիստական լուծումներից։

Այդ սահմանումների հիմքում ընկած է օբյեկտի և սուբյեկտի էսթետիկական առնչությունների հարցը։ Ձենք պնդում, որ էսթետիկայի առարկայի (կամ ավելի ճիշտ, նրա հնարավոր սահմանների) վերոնշյալ տարածված սահմանումը կատարյալ է և վերջնական, սակայն նրանում նույնպես առաջ է քաշվում օբյեկտի և սուբյեկտի, իսկ ավելի լայն առումով՝ մատերիայի և գիտակցության նույն հիմնահարցը։

Այնուհետև։ Բացահայտվում է էսթետիկական գիտելիքն ազգակից այլ բնագավառներից առավելագույնս սահմանազատելու միտումը (ուղղություններից յուրաքանչյուրի շրջանակներում)՝ սահմանումների մեջ ամփոփված հատկանիշների միաժամանակյա ճշգրտմամբ ու հղկմամբ։

Այսպիսով, ճշգրտելով էսթետիկայի միասնական առարկայի հարցը և ելնելով դրանից՝ էսթետիկայի պատմաբանը հնարավորություն է ստանում մի էական դիտակետից էլ լուսաբանելու էսթետիկայի զարգացման ողջ ընթացքը իր բազմազանության, փոփոխությունների ու մեկնաբանությունների, ուղղությունների, կոնցեպցիաների, տեսակետների փոփոխման ու զարգացման, ուսումնասիրվող նյութի ընդլայնման ու խորացման մեջ և այլն։

Այժմ անդրադառնանք պատմաէսթետիկական ուսումնասիրությունների որոշ կողմերի ընդհանուր բնութագրմանը։

Ուշադրություն են գրավում պատմաէսթետիկական գրականության մեջ տերմինաբանության տարընթերցումները։ Հանդիպում են հրատարակված ուսումնասիրությունների հետևյալ վերնագրերը՝ «Էսթետիկայի

պատմություն», «էսթետիկական մտքի պատմություն», «էսթետիկական ուսմունքների պատմություն»[2]։

Բոլոր երեք ասպեկտներն էլ գոյության իրավունք ունեն։ Բայց բանն այն է, որ հրատարակված աշխատությունները իրենց բովանդակությամբ չափազանց մոտ են, եթե չասենք, որ երբեմն անգամ նույնական. նրանցում, որպես կանոն, ուսումնասիրվում է միևնույն նյութը՝ միևնույն լուծումով։ Այդ ժանրային անորոշության և անձևության հաղթահարման համար, կարծում ենք, պետք է փորձել ճշտել վերնագրերից յուրաքանչյուրի բովանդակությունը։

Վերոնշյալ վերնագրերից վերջինը, մեր կարծիքով, առավել նեղացված է, քանի որ ուսումնասիրողի ուշադրությունը սահմանափակում է միայն այն նյութով, որն ամփոփված է ուսմունքի բարձր մակարդակին հասած արդեն ավարտված կոնցեպցիաների շրջանակներով։ Եթե խստագույնս առաջնորդվենք վերնագրով, ապա էսթետիկորեն նշանակալի մնացած ողջ նյութը պետք է տվյալ աշխատանքից դուրս մնա։ Իսկ եթե բուն ուսմունքներից բացի արտացոլվեն նաև էսթետիկայի բնագավառի այլ երևույթներ ու փաստեր (ինչ և իրականում դիտվում է), ապա նման աշխատանքների բովանդակությունը առաջարկվող վերնագրից ավելի լայն կլինի։

«Էսթետիկայի պատմություն» վերնագիրն ավելի հարմար է այն աշխատանքներին, ուր ուսումնասիրվում է էսթետիկական գիտության (էսթետիկայի, որպես գիտության, ստատուս ձեռք բերած ինչ-որ բանի) պատմությունը։ Ինչ խոսք, նման աշխատանքներում համապատասխան տեղ կզբաղեցնեն նաև էսթետիկական ուսմունքները և ոչ միայն դրանք, այլև այն ամբողջ կոնցեպցիոն, հասկացողակատեգորիական նյութը, որն ընդգրկում է էսթետիկա հասկացությունը որպես գիտություն (մենք կանգ չենք առնում էսթետիկա տերմինի վրա, որ ամենուր կիրառվում է յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում, յուրաքանչյուր երկրում գործող էսթետիկական գիտելիքների համակարգված շարադրանքը նշելու համար)։

Վերջապես երրորդ վերնագիրն ավելի տարողունակ է և այդ առումով հնարավորություն է տալիս ուսումնասիրության ոլորտն ընդգրկել էսթետիկայի տեսական բնույթի ցանկացած փաստեր ու երևույթներ, այդ թվում նաև էսթետիկական ուսմունքները և էսթետիկական գիտության բաղկացուցիչ մասերը, առանց վերջիններս ուռճացնելու կամ ողջ վերլուծությունը դրանց հանգեցնելու։ Այդ վերնագիրը նաև ամենից հարմարն է առանձին երկրի կամ ժողովրդի պատմաէսթետիկական նյու-

թի վերլուծության ու շարադրման (համենայն դեպս՝ սկզբնական) համար։

Խոսելով այս ամենի մասին՝ չի կարելի չընդգծել «էսթետիկական մտքի պատմություն» և «էսթետիկայի պատմություն» վերնագրերի մոտիկությունը, որոնք առանձին դեպքերում (ամեն անգամ հատուկ վերապահումով) կարող են առանց նկատելի վնասի որպես հոմանիշներ գործածվել մեկը մյուսի փոխարեն, ընդ որում՝ ավելի շուտ առաջինը երկրորդի փոխարեն, քան հակառակը։

Բացի վերնագրերի բազմազանությունից, պատմաէսթետիկական նյութի շարադրման ժամանակ դիտվում է ևս մեկ, առավել էական խախտում։ Ցավոք սրտի, հրատարակված մի շարք աշխատություններում, անկախ նրանց վերնագրերից, խախտվում է ուսումնասիրության առարկան, և շարադրվում է, ըստ էության, էսթետիկական գիտակցությունը, նրա պատմությունը, որը ներկայանում է իբրև հրապուրիչ, սակայն խիստ համապարփակ ու գլոբալ և, որ կարևոր է, անորոշ մի խնդիր, որի վերլուծությանը գիտությունը կարող է մոտենալ էսթետիկական գիտակցության ընդգրկած բոլոր բնագավառների, ոլորտների ու բաղկացուցիչ մասերի նախնական համակողմանի վերլուծությունից հետո միայն։ Նմանօրինակ աշխատանքներում շփոթվում են էսթետիկայի (էսթետիկական մտքի, էսթետիկական կոնցեպցիաների և այլն) և էսթետիկական գիտակցության (որի մի մասն է հանդիսանում և որը տեսականորեն իմաստավորում է հենց ինքը՝ էսթետիկան) սահմանները՝ ի վնաս թե՛ առաջինի և թե՛ երկրորդի լիարժեք վերլուծության։

Փոքր-ինչ ավելի մանրամասն կանգ առնենք այս հարցի վրա, քանի որ այն ներկայանում է որպես սկզբունքորեն կարևոր հարց, որովհետև դեպի էսթետիկական գիտակցություն թեքվում են շատերը, ընդ որում և նրանք, ովքեր բացեիբաց հռչակում են նման մոտեցումը, և նրանք, ովքեր այդ անում են լռելյայն[3]։

Էսթետիկայի պատմության վերաբերյալ այն միտքն է արտահայտվել, որ այն կարելի է երկակի հասկանալ. մի կողմից՝ որպես էսթետիկական գիտակցության պատմություն, մյուս կողմից՝ էսթետիկայի՝ որպես գիտության պատմություն։

Այն հանգամանքը, որ մինչև այժմ փաստորեն չի եղել համաշխարհային էսթետիկայի պատմություն, որպես էսթետիկական գիտակցության պատմություն, այսինքն՝ որպես մարդու գործունեության տարբեր ոլորտներում իրացվող էսթետիկական սկզբունքների պատմության ուսումնասիրման փորձ, ինչ խոսք, բնավ էլ ծանրակշիռ ապացույց չէ պնդելու համար այն, որ իբր ընդհանրապես անհնար է ստեղծել նման-

օրինակ պատմություն։ Սակայն հայտնի է, որ արվեստների պատմությունը, արտադրության էսթետիկայի, բարքերի էսթետիկայի պատմությունը, մշակույթի զարգացումը էսթետիկական կտրվածքով եղել են ինչպես առանձին արվեստների, այնպես էլ մնացած ոլորտներին համապատասխան պատմությունների ուսումնասիրման առարկան։ Այժմ առաջ է քաշվում այն հարցը, որ դրանք՝ մարդու գործունեությունը թափանցող էսթետիկական երևույթները, էսթետիկական համապարփակ գիտակցության նյութ դառնան, որը և պետք է հանդես գա որպես էսթետիկական գիտակցության պատմություն և ոչ թե էսթետիկական մտքի պատմություն, որը, ի միջի այլոց, առաջինի բաղկացուցիչ մասերից մեկն է։ Ուստի, եթե հարցը հստակ դրվի, ապա էսթետիկայի պատմության բաժանման վերոնշյալ սկզբունքը ենթադրում է նախ էսթետիկայի՝ որպես գիտության ուսումնասիրություն և երկրորդ՝ նույն էսթետիկայի՝ որպես գիտության առավել ընդլայնված ուսումնասիրություն. առավել ընդլայնված, քանզի այս դեպքում արդեն ավելանում են էսթետիկական գիտակցության մյուս բաղկացուցիչ մասերը։

Հետևաբար, այսպես թե այնպես, էսթետիկական կոնցեպցիաների և համապատասխանաբար էսթետիկական կատեգորիաների ու հասկացությունների պատմությունից բացի, նմանօրինակ պատմության մեջ պետք է ուսումնասիրվեն նաև արվեստի պատմությունը, մարդկության գործունեության այն կողմերն ու հատկանիշները, որոնք առնչվում են էսթետիկական երևույթների հետ։ Մի խոսքով դա պետք է լինի էսթետիկականի դրսևորումների յուրօրինակ ընդհանրացված (սինթետիկ) պատմություն։ Սովետական գիտության մեջ արվեստների ընդհանրացված (սինթետիկ) պատմություն ստեղծելու փորձ արվել է։ Այդպիսին է, օրինակ, Իերեմիա Իոֆֆեի գիրքը[4]։ Եթե նույնիսկ նման փորձերն անթերի ու կատարյալ համարենք, այնուամենայնիվ, չի կարելի պնդել, որ էսթետիկական գիտակցության պատմության ուսումնասիրության ուղղությամբ արդեն կատարվել է որոշակի աշխատանք, որի վրա կարելի է հենվել։

Որքանով է ներկայումս ռեալ և նպատակահարմար այդպիսի պատմության ստեղծումը, ինչպիսի տարակուսանքներ են առաջանում նման հարցադրման դեպքում կամ ինչպիսի ճշգրտումների կարիք է զգում վերջինս՝ այս ամենը մի կողմ թողնենք։ Անհրաժեշտ ենք համարում ընդգծել լոկ այն, որ մի բան է էսթետիկայի՝ որպես գիտության պատմությունը, որն իրենից ներկայացնում է տեսությունների, ուսմունքների, կատեգորիաների, հասկացությունների պատմություն, մի խոսքով, տեսականորեն ձևավորված հայացքների պատմություն, և բոլորովին այլ

բան է էսթետիկականի դրսևորումը մարդու գործունեության տարբեր բնագավառներում։ Ե՛վ մեկի, և՛ մյուսի ուսումնասիրությունը տարբեր մոտեցումներ է պահանջում։ Թե ինչպես պետք է միավորվեն մի ամբողջի մեջ մեկը և մյուսը, ներկայումս դժվար է պատկերացնել, դժվար է այդ կապակցությամբ գործնական հանձնարարականներ տալ։ Եվ չնայած դրան, պետք է խստիվ տարբերակել էսթետիկական մտքի պատմությունը էսթետիկական գիտակցության պատմությունից, միաժամանակ պետք է ընդգծել, որ այդ հարցի շուրջը մտքերի փոխանակությունն օգտակար կլիներ։ Միևնույն ժամանակ դժվար է կանխորոշել, թե ինչպիսի տեղ կգրավեն բուն էսթետիկական մտքի լուսաբանումը և մնացած օժանդակ նյութը, ինչպես պետք է համակարգվեն էսթետիկական գիտակցության տարբեր կողմերը, էսթետիկական գործունեության տարբեր ձևերը և այլն։

Սակայն կարելի է որոշակիորեն ասել, որ չկա էսթետիկական մտքի պատմության այնպիսի շարադրանք, ուր այս կամ այն չափով, այս կամ այն ձևով տեղ գտած չլինեն էսթետիկական գիտակցության և էսթետիկական գործունեության տարբեր կողմերը։ Կարևորն այն է, որ նման նյութը միշտ կիրառվել է որպես լրացուցիչ, երկրորդական՝ տրվյալ պահին լուսաբանման համար անհրաժեշտ նյութ, առանց որի էսթետիկական տեսության պատմության տվյալ բաժնի ուսումնասիրությունն ամբողջական չի լինի։ Բայց որոշիչ դերը միշտ տրվել է էսթետիկական տեսությանը։ Տեղին է հիշեցնել, որ էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության մեջ մեծ տեղ են գրավել նաև այն գիտությունների որոշ կողմերն ու գծերը, որոնց հետ անմիջականորեն կապված է եղել էսթետիկան կամ որոնց հովանու տակ զարգացել է վերջինս։

Մեր կարծիքով, էսթետիկական մտքի պատմության առարկան պետք է լինի իրականության մեջ էսթետիկականի մասին, աշխարհի էսթետիկական ճանաչողության և մարդու էսթետիկական գործունեության էության ու ընդհանուր օրենքների մասին որպես տեսական գիտելիքների ոլորտ դիտվող էսթետիկան՝ վերցված իր պատմական զարգացման մեջ։ Նման մոտեցման դեպքում էսթետիկական միտքը չի սահմանափակվի մի կողմից սոսկ արվեստի գործառության և զարգացման ընդհանուր օրենքների ուսումնասիրությամբ (թեև հենց դրանց ուսումնասիրմանն է երբեմն առավելություն տրվում էսթետիկայում), մյուս կողմից էսթետիկական մտքի պատմությունը չի դիտվի որպես էսթետիկական գիտակցության պատմություն, քանի որ վերջինս ավելի լայն է և իր մեջ ներառնում է նաև արվեստի պատմությունը, մարդկության գեղարվեստա-

կան զարգացման պատմությունը։ Էսթետիկական կոնցեպցիաների, կատեգորիաների, պատկերացումների և հասկացությունների ձևավորումն ու զարգացումը պետք է դառնան էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրման առարկան։ Ոչ թե էսթետիկական գիտակցության պատմությունը, այլ էսթետիկական գիտակցության էսթետիկատեսական ընդհանրացումն է էսթետիկայի պատմաբանի ուշադրության առարկան։

Ասվածը հիմք է ծառայում աղբյուրների հարցի լուծման համար։

Իհարկե, որպես էսթետիկական մտքի պատմության հիմնական աղբյուր պետք է նախ և առաջ դիտվեն էսթետիկական բնույթի տեսական աշխատանքները։ Բայց քանի որ ինքը՝ էսթետիկական միտքը, երկար ժամանակ հանդես էր գալիս գիտելիքի այլ բնագավառների հետ անքակտելի միասնության մեջ կամ նրանց հովանու տակ, հետևաբար էսթետիկայի պատմության ուսումնասիրության հուսալի, երբեմն էլ միակ աղբյուր կարող են լինել փիլիսոփայական, արվեստագիտական, հռետորական, գեղարվեստական, քննադատական և այլ աշխատությունները այն դեպքերում, երբ դրանցում կա էսթետիկական նյութ։ Միջնադարի էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրման գործում կարող են օգտակար լինել նաև աստվածաբանական գործերը, հատկապես գեղեցիկի և էսթետիկական մի շարք այլ կատեգորիաների էության կրոնաիդեալիստական ըմբռնման քննադատական բնութագրման համար։ Կարևոր աղբյուր են նաև արվեստի գործիչների տեսական աշխատությունները, գրախոսականները, ելույթները, հոդվածները, ինչպես նաև էպիստոլյար ժառանգությունը, հուշերը, օրագրերը և այլն։

Մենք վճռականորեն դեմ ենք արվեստը, որպես այդպիսին, էսթետիկական մտքի պատմության օբյեկտ դիտելուն։ Այդ դեպքում ջնջվում է արվեստի պատմության և էսթետիկայի պատմության միջև եղած սահմանը։ Իհարկե, գեղարվեստական ստեղծագործություններում էսթետիկական հայտնի սկզբունքները ներկայացվում են միջնորդավորված, մարմնանում են պատկերավոր ձևի մեջ և ցանկության դեպքում կարող են առանձնացվել ու մեկնաբանվել։ Բայց դա էսթետիկական մտքի պատմության հետ ուղղակի առնչություն չի ունենա, քանի որ նախ՝ հազիվ թե գտնվի որևէ գեղարվեստական ստեղծագործություն, որն իր վրա չկրի այս կամ այն էսթետիկական համակարգի կամ կոնցեպցիայի կնիքը, և երկրորդ՝ արվեստագետի էսթետիկական հավատամքի բացահայտումը (որը մարմնավորված է նրա ստեղծագործության մեջ և նրա էությունն է կազմում) գրականագիտության և արվեստագիտության խնդիրներից է։ Սակայն էսթետիկական մտքի պատմությանը հետաքրքրում է ոչ թե ինքը՝ արվեստը, այլ միտքն արվեստի մասին, նրա էության ու զար-

գացման իմաստավորումն ու ընդհանրացումը։ Այդ պատճառով էլ գեղարվեստական ստեղծագործությունը կարող է օգտագործվել որպես էսթետիկական մտքի պատմության աղբյուր ոչ թե ինքնին, այլ միայն այն դեպքում, երբ նրանում ուղղակիորեն առկա են արվեստի մասին հեղինակի դատողությունները, այսինքն՝ ըստ էության տեսական բնույթի նյութ՝ ներհյուսված գեղարվեստական ստեղծագործության բովանդակության մեջ, որը հաճախ հանդես է գալիս ինքնուրույնաբար ու կարող է հեշտությամբ անջատվել գեղարվեստական համատեքստից և ուսումնասիրվել որպես հեղինակի տեսական դատողություն։ Այդպիսիք են, օրինակ, Ռաբլեի, Սերվանտեսի, Շեքսպիրի գեղարվեստական ստեղծագործություններից քաղված հատվածները, որոնք տեղ են գտել «էսթետիկական մտքի պատմության հուշարձանների» 1-ին հատորում։

Աղբյուրների նման ընտրության դեպքում հնարավոր կլինի բացահայտել էսթետիկական մտքի պատմության զարգացման, ինչպես նաև տարբեր կոնցեպցիաների առաջացման ու անկման պատճառների ներքին օրինաչափությունները։

Խոսելով այդ մասին, մենք ոչ միայն չենք բացառում, այլև, ընդհակառակը, հնարավոր ենք համարում արվեստի պատմության և էսթետիկական մտքի պատմության միջև եղած փոխհարաբերությունների բացահայտումը, սակայն սոսկ նրա ընդգծման և հարստացման, բայց ոչ նենգափոխման նպատակով։

Իսկ ինչպիսի՞ հարցեր են ծագում, ի լրումն ասվածի, էսթետիկական մտքի պատմության զարգացումը Հայաստանում ուսումնասիրողի առաջ։

Եթե հաշվի չառնենք XIX դարի վերջի և XX դարի սկզբի մի շարք հեղինակների աշխատություններում առկա պատմաէսթետիկական բնույթի մեկուսի և հազվադեպ դիտողությունները, ապա նախահեղափոխական շրջանի առաջին գործը, որտեղ հեղինակը անդրադարձել է նաև հայ էսթետիկական մտքի լուսաբանմանը, հայ Մխիթարյան միաբանության անդամ Ս. Երեմյանի «Գրականության պատմությունը և գեղեցիկը» գիրքն է[5]. այն ներկայացնում է XIX դարի հայ մշակույթի մի շարք գործիչների հայացքները։ Շարադրանքը տարվում է համաշխարհային արվեստի և գրականության պատմության լայն ֆոնի վրա։ Թեև գիրքն առանձնապես աչքի չի ընկնում տեսական խորությամբ, իսկ էսթետիկական նյութը տրվում է գլխավորապես գրականության պատմության առնչությամբ, այնուամենայնիվ այն հետաքրքրական է որպես Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ամենահարուստ շրջաններից մեկի լուսաբանման առաջին փորձ։

Հայ էսթետիկական մտքի բուն պատմության գիտական ուսումնասիրությունը սկսվել է միայն հեղափոխությունից հետո։ Հենց այդ ժամանակ այն դարձավ ինքնուրույն ուսումնասիրության առարկա։ Ներկայումս արդեն այդ հարցի վերաբերյալ կա հարուստ գրականություն, ուր վերլուծվում են առանձին պատմական ժամանակաշրջանների, առանձին հեղինակների էսթետիկական հայացքները։ Ուսումնասիրողների այդ մեծ ցուցակում առաջինը պետք է նշել սովետական նշանավոր էսթետ Ա. Ա. Ադամյանի անունը, որի «Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները» աշխատությունն իրավամբ կարող է օրինակ ծառայել բոլոր նրանց համար, ովքեր մտադիր են անդրադառնալ հայ էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրմանը։ Ընդհանուր բնույթի աշխատանքներից պետք է հիշատակել Գ. Զ. Ապրեսյանի «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» երկհատոր գիրքը և «Հայաստանում էսթետիկական մտքի զարգացման ակնարկ» կոլեկտիվ մենագրությունը։

Ենթադրում ենք, որ հարցի մշակման տվյալ փուլում առավել հարմար է «Հայաստանում էսթետիկական մտքի պատմությունը» վերնագիրը, որը հնարավորություն է տալիս հավաքել և ընդհանրացնել էսթետիկական ողջ նյութը, որն առայժմ շատ քիչ է ուսումնասիրված և լի է բացերով ու չհետազոտված կողմերով։

Այնուհետև։ Նյութի շարադրման ժամանակ, ըստ երևույթին, պետք է կիրառվեն նաև տիպաբանական և պատմահամեմատական մոտեցումներ։ Հայկական նյութը, որպես ռեգիոնալ, պետք է մատուցվի էսթետիկական մտքի պատմության համընդհանուր գործընթացի հետ իր կապերով, որն իր հերթին պայմաններ կստեղծի հետագայում էսթետիկայի զարգացման ընդհանուր գործընթացը ներկայացնել՝ նաև հայկական նյութի օգտագործումով։

Մեթոդաբանական առումով հայ էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել և բացահայտել Արևելքի և Արևմուտքի միջև հարաբերությունները Հայաստանի գաղափարախոսական կյանքում, որի մասին մասնավորապես խոսում է ակադ. Բ. Մ. Կեդրովը իր «Գիտությունների դասակարգումը» աշխատությունում՝ փիլիսոփայության պատմության մեջ հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթի աշխատությունների նշանակության վերլուծության կապակցությամբ։ Բ. Մ. Կեդրովը ցույց է տալիս, որ VI դարում Հայաստանում իրականացվում էր երկու կարգի շփում. մի կողմից՝ տարբեր մշակույթների կապը ժամանակի մեջ (անտիկ դարաշրջանի մշակույթի, արաբական միջնադարի և հատկապես Վերածննդի դարաշրջանի մշա-

կույթների միջև), մյուս կողմից՝ տարածության մեջ (Արևելքի և Արևմուտքի երկրների մշակույթների միջև)։ Աշխարհի տարբեր մասերի, Արևելքի և Արևմուտքի մշակույթների կապի և հաջորդականության գաղափարը և այդ գործընթացում Հայաստանի դերն իրենց բազմակողմանի լուսաբանումը գտան մասնավորապես Վ. Կ. Ջալոյանի «Արևելք-Արևմուտք» աշխատությունում։

Անցյալում հայ ժողովրդի ճակատագրի երբեմն շատ ողբերգական դեպքերի պատճառով նրա մեծ զանգվածներն իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու նպատակով հարկադրված էին թողնել հայրենիքը և սփռվել աշխարհով մեկ։ Բայց հայկական Սփյուռքը երբեք չէր խզում իր գաղափարական կապերը հայրենիքի հետ, մոռացության չէր մատնում նրան։ Աշխարհի տարբեր երկրների բնակեցման վայրերում շարունակվում էր ինտենսիվ հոգևոր կյանքը, ավելին՝ առանձին ժամանակահատվածներում առավել կարևոր հոգևոր արժեքները ստեղծվում էին հենց այնտեղ։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդի էսթետիկական մտքի պատմությունն ընդգրկում է բավականին լայն, աշխարհագրական առումով ընդարձակ ոլորտ՝ բուն, պատմական Հայաստանը և Սփյուռքը։

Սփյուռքում հասարակական-քաղաքական մտքի զարգացումը հենվում էր ոչ միայն ազգային ավանդույթների վրա, այլև իրականացվում էր այս կամ այն երկրի գաղափարական կյանքի հետ ակտիվ փոխհարաբերությունների պայմաններում։ Ուստի Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության ժամանակ մեծ նշանակություն է ստանում այլ երկրների ու ժողովուրդների մշակույթների հետ այդ մտքի բազմազան կապերի ու փոխազդեցությունների բացահայտումը։

Եվ այստեղ հատուկ տեղ է պատկանում ռուս ժողովրդի դեմոկրատական մշակույթի հետ ունեցած հարաբերություններին, որի բարերար ներգործության ներքո մոտ երկու դար է, ինչ իրականացվում է հայ մշակույթի զարգացումը։ Այդ մշակութային կապերի համակողմանի լուսաբանումը Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության խնդիրներից մեկն է։

Վերջապես, ևս մեկ կարևոր մեթոդաբանական դրույթ։ Քրիստոնեական գաղափարախոսության տիրապետության պայմաններում, ընդհուպ մինչև XIX դարի կեսը (այսինքն՝ մինչև հայ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի աշխատությունները), Հայաստանի էսթետիկական մտքի պատմության մեջ մատերիալիստական ուղղություն չէր ձևավորվել։ Սակայն դա չպետք է հանգեցնի իդեալիստական բնույթի աշխատանքների արհամարհմանը և թերագնահատմանը։ Առաջին՝ դրանք պետք են հենց իդեալիստական էսթետիկայի բնութագրման և քննա-

դատական վերլուծության համար։ Երկրորդ՝ Հայաստանում, ինչպես շատ այլ երկրներում, էսթետիկայի հարցերի դրական (պոզիտիվ) մշակումը երկար ժամանակ իրականացվում էր իդեալիզմի սահմաններում կամ նրա ազդեցության տակ։ Երրորդ՝ հասարակական գիտակցության զարգացման բարդությունն արտահայտվել է մասնավորապես և այն բանում, որ իդեալիստական բնույթի աշխատություններում կամ հեղինակների մոտ մենք հաճախ հանդիպում ենք էսթետիկայի հարցերի, ըստ էության, մատերիալիստական բնույթի մեկնաբանությունների։

Վերջում կուզեինք ասվածի լույսի ներքո անդրադառնալ էսթետիկայի (և էսթետիկականի) համար հայերեն գեղագիտություն տերմինի անբավարար և, վերջին հաշվով, ոչ ճշգրիտ լինելուն, տերմին, որ մեկնաբանվում է դեռևս Ն. Գ. Չերնիշևսկու ժամանակներից մերժված միտման ոգով, որը էսթետիկան հանգեցնում է գեղեցիկի մասին ուսմունքին՝ մոռացության մատնելով էսթետիկայի այլ, իրենց ծավալով գեղեցիկի պրոբլեմը զգալիորեն գերազանցող բազմաթիվ հարցեր։ Այդ իմաստով գեղագիտություն տերմինը մեզ տանում է դեպի էսթետիկայի երեկվա օրը։ Բայց հայտնի է, որ XIX դարի և XX դարի սկզբի հայ բազմաթիվ գործիչներ չեն խորշել էսթետիկա տերմինից և հաճույքով գործածել են այն։ Այդ տերմինը համապատասխանում է ժամանակակից գիտական պահանջներին, էսթետիկայի՝ որպես գիտության բնագավառի իրական բովանդակությանը, և նրա օգտագործումից հրաժարվելը ոչնչով չի արդարացվում։

Я. И. ХАЧИКЯН

А 76650

О ПРЕДМЕТЕ И ИСТОЧНИКАХ ИСТОРИИ ЭСТЕТИЧЕСКОЙ МЫСЛИ

(к постановке вопроса)

Резюме

Вопрос о предмете исследования имеет первостепенное значение для любой области научно-теоретической деятельности. Определение предмета истории эстетической мысли связано с соответствующим пониманием предмета эстетики. Как по первому, так и по второму вопросу в литературе встречаются самые разнообразные определения и суждения. Задача состоит в том, чтобы, опираясь на современный уровень развития эстетики, дать достаточно точное и емкое определение предмета истории эстетической мысли.

2—3841

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

В последней части статьи в связи с предметом истории эстетической мысли рассматривается вопрос об источниках изучения ее истории.

[1] *Տե՛ս Հայ էսթետիկական մտքի պատմությունից, հետազոտությունների ժողովածու, Երևան, գիրք 1, 1974, գիրք 2, 1976։*

[2] *Տե՛ս* **И. Л. Маца**, История эстетических учений. М., 1962; **М. Ф. Овсянников, З. В. Смирнова.** Очерки истории эстетических учений. Издательство АН СССР, М., 1963; Лекции по истории эстетики. Под редакцией профессора **М. С. Кагана.** Л., 1973, книга 1 (в трех томах): **М. Ф. Овсянников.** История эстетической мысли. М., 1984.

[3] *Այսպես, Լ. Յա. Զիվելչինսկայան գրում է, որ էսթետիկայի պատմությունը «պետք է լինի էսթետիկական գիտակցության, այլ ոչ թե առանձին էսթետիկական տեսությունների պատմություն»*
(**Л. Я. Зивельчинская,** Опыт марксистского анализа истории эстетики, 1928): *Նույն ընդարձակված ձևով են դիտում էսթետիկայի պատմության առարկան Գիլբերտն ու Կունը (տե՛ս* **К. Гильберт, Г. Кун.** История эстетики. М., 1960):

[4] **И. Иоффе.** Синтетическая история искусств. Л., 1933.

[5] **Ս. Երեմյան,** *Գրականության պատմությունը և դեղեցիկը, Վենետիկ, 1915։*